# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 ապրիլի 2025 թվականի N 210 - Ա**

**«ԳՈՐԻՍԻ Ս.ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության և 2-րդ մասի «բ» կետի պահանջներով.

**որոշում եմ.**

1. Ստեղծել աշխատանքային խումբ «Գորիսի Ս.Խանզադյանի անվան N6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրների՝ պայմանավորված այլ վայրում դպրոցի ուսումնական գործընթացի կազմակերպմամբ, ուսումնասիրության նպատակով:
2. Հաստատել աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Աշխատանքային խմբին՝ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ՀՀ Սյունիքի մարզպետին ներկայացնել համապատասխան հաշվետվություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ. ապրիլի 22
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
«22» ապրիլի 2025թ.
N -210Ա որոշման

ՑԱՆԿ

«Գորիսի Ս.Խանզադյանի անվան N6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսումնասիրություն կատարելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի

| | |
|---|---|
| Մերի Գանդալյան | ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ |
| Մարինե Աբգարյան | ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ |

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարին փոխարինող՝ Գ. Թադևոսյան